# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/19 ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ-ի հոկտեմբերի 4-ին կնքված պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Ծառայությունների մատուցման գործընթացը սկսելու նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը համաձայնագրով հաստատել են ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 7.1 կետի համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:
Էլ.փոստ՝ info@interlimens.com:
Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2015թ. նոյեմբերի 4-ին կնքված N ՖՆ-ԲԸՀՇՁԲ-15/19 պայմանագրի

ք. Երևան "..13.." նոյեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գյուլբուդաղյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 04/11/2015թ. կնքված N ՖՆ-ԲԸՀՇՁԲ-15/19 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1 հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի.

1.2 սահմանել, որ Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայությունների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ |
| ք. Երևան, Մելիք Ադամյան 1 | ք. Երևան, Վաղարշյան 8/1 |
| ՀՀ ֆն աշխատակազմի գործառնական | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| գանձարան | ՀՎՀՀ 00040569 |
| ՀՎՀՀ 02629081 | Հ/Հ 16300814777575 |
| Հ/Հ 90001357 4018 | |
| Հ/Հ 90001320 2016 | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված
"04" նոյեմբերի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/19 պայմանագրի հիման վրա
"..13." նոյեմբերի 2015թ.կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | |
|---|---|---|---|
| | Նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| ՀՀ ֆինանսների նախարարության (ներառյալ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումները) հիմնական միջոցների և այլ ապրանքանյութական արժեքների գույքագրման ծառայություններ | 10000000 | 10000000 | 10000000 |

* *Գումարները ներկայացված են աճողական:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մելիք Ադամյան 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013574018
Հ/Հ 900013202016

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
ք. Երևան, Վաղարշյան 8/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 00040569
Հ/Հ 163008147775

(ստորագրություն)